



Հայաստանի կենսաբ. հանդես, 3(69), 2017

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԾԱԳԱՐՆԵՐԻ ԿՈԿՑԻԴԻՈԶԻ ՏԵՍԱԿԱՅԻՆ ԿԱԶՄԸ ԵՎ ՎԱՐԱԿՎԱԾՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Ռ.Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՀՀ ԳԱԱ ԿՅԷԳԿ Կենդանաբանության ինստիտուտ
barseghyanr@yahoo.com

2015-2016 թթ. հետազոտվել է Գեղարքունիքի մարզի ճագարների կոկցիդիոզով վարակվածությունը: Հետազոտությունների արդյունքում ճագարների մոտ հայտնաբերվել է 4 տեսակի էյմերիա – *Eimeria magna*, *E. media*, *E. perforans* և *E. irresidua*, որոնցից ամենաբարձր հանդիպման հաճախականությունը ունեցել է *E. irresidua* տեսակը: Վարակվածության ինտենսիվության առավել բարձր ցուցանիշ գրանցվել է 3-4 ամսական ճագարների մոտ:

Կոկցիդիոզ – ճագար – Գեղարքունիքի մարզ

В 2015-2016 гг. была исследована зараженность кроликов кокцидиозом в Гегаркуникском марзе. У кроликов были обнаружены эймерии 4 видов: *Eimeria magna*, *E. media*, *E. perforans* и *E. irresidua*. Частота встречаемости *E. irresidua* была выше других видов. Самая высокая степень зараженности была отмечена у крольчат в возрасте 3–4 месяцев.

Кокцидиоз – кролик – Гегаркуникский марз

Invasion rate of rabbits from Gegharqunik region has been studied in 2015-2016. During the study 4 species of eimeria – *Eimeria magna*, *E. media*, *E. perforans* as well as *E. irresidua* have been revealed. *E. irresidua* species was registered most frequently. The highest rate of invasion has been registered among 3-4 months old rabbits.

Coccidian – rabbit – Gegharqunik region

Ճագարաբուծության մեջ ինվազիոն հիվանդությունների շարքում իրենց ուրույն տեղն ունեն որովայնամակաբույծային հիվանդությունները, հատկապես կոկցիդիոզը (էյմերիոզը): Այն համարվում է ճագարների ամենատարածված մակաբուծային հիվանդությունը, որը մեծ վնաս է հասցնում ճագարաբուծական տնտեսություններին:

Ճագարների լեղապարկում *Eimeria stiedai* օոցիստներ առաջին անգամ հայտնաբերվել են Լեվենհուկի կողմից 1674 թ. [1, 2]:

Հայաստանում ճագարների էյմերիոզի ուսումնասիրմանը նվիրված աշխատանքները քիչ են: 1999-2001 թթ. հետազոտվել է Հայաստանի երկու ճագարաբուծական տնտեսություններում ճագարների կոկցիդիոզի տեսակային կազմը և վարակվածության ցուցանիշները [4], իսկ 2015-2016 թթ. հետազոտվել են Հայաստանի Նախալեռնային շրջաններից Լոռու մարզի Տաշիրի տարածաշրջանում [3]:

Ճագարաբուծությունում ինվազիայի բազմակողմանի վնասի պատճառով Հայաստանում կոկցիդիոզի ուսումնասիրությունը շատ կարևոր է: Կոկցիդիոզի խնդիրը համարվում է արդիական, որը պայմանավորված է վարակվածության բարձր ցուցանիշով:

Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել Գեղարքունիքի մարզում ճագարների կոկցիդիոզի տեսակային կազմը և վարակվածության ցուցանիշները, ինչպես նաև կատարել Հայաստանի լեռնային և նախալեռնային գոտիներում ճագարների կոկցիդիոզի տեսակային կազմի և հանդիպման հաճախականության համեմատական վերլուծություն:

Նյութ և մեթոդ: Աշխատանքի իրականացման համար 2015-2016 թթ. փորձանմուշներ են հավաքվել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզից (ք. Գավառ, ք. Ճամբարակ և հարակից գյուղեր): Հետազոտվել է տարբեր հասակային խմբի 281 գլուխ ճագար:

Ճագարների կղանքի ուսումնասիրությունները կատարվել են ըստ Ֆուլերոնի մեթոդի, որը թույլ է տալիս ավելի ճշգրիտ ախտորոշել հիվանդությունը [1, 2]:

Աղյուսակներ և բնասրկում: Գեղարքունիքի մարզում կատարված հետազոտությունները ցույց են տվել, որ անկախ տարվա եղանակից (սեզոնայնությունից) ճագարների մատղաշների մոտ վարակվածության էքստենսիվության ցուցանիշը կազմել է 100 %, սակայն տարվա տարբեր եղանակներին օոցիստների անջատման ինտենսիվությունը եղել է տարբեր: Հատուն առանձնյակների մոտ օոցիստների անջատման ինտենսիվության և էքստենսիվության ցուցանիշները փոփոխվել են տարվա եղանակից և տարածաշրջանից կախված: Վարակվածության էքստենսիվության ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է աշնանը, իսկ ամենացածրը՝ ձմռանը (աղ. 1): Վարակվածության ինտենսիվության ցուցանիշը ավելի բարձր է եղել 3-4 ամսեկան ճագարների մոտ:

Աղյուսակ 1. Գեղարքունիքի մարզում ճագարների կոկցիդիոզով վարակվածության ցուցանիշները

Տարվա եղանակները	Աշուն	Ձմեռ	Գարուն	Ամառ	Ամառ
Տարածաշրջան	ք. Ճամբարակ և հարակից գյուղեր	ք. Ճամբարակ և հարակից գյուղեր	ք. Ճամբարակ և հարակից գյուղեր	ք. Ճամբարակ և հարակից գյուղեր	ք. Գավառ
Հետազոտված ճագարների քանակը	70	78	74	29	30
Վարակվածության էքստենսիվությունը, %	96	78	81	93	93
Վարակվածության ինտենսիվությունը	205072.10	32507.04	29132.89	81900.64	30861.11
Վարակվածությունը 1գ. կղանքում	+++	++	++	++	++

Թույլ վարակվածություն (+) – մինչև 10000 օոցիստ 1գ.կղանքում
 Միջին վարակվածություն (++) – մինչև 100000 օոցիստ 1գ.կղանքում
 Ուժեղ վարակվածություն (+++) – 100000 և ավել օոցիստ 1գ.կղանքում

Հետազոտվել է նաև էյմերիայի տեսակային կազմը: Գեղարքունիքի մարզի ք. Ճամբարակում և հարակից գյուղերում ճագարների մոտ հայտնաբերվել է 4 տեսակի էյմերիա – *E. magna*, *E. media*, *E. perforans* և *E. irresidua*, իսկ ք. Գավառի և հարակից գյուղերում ճագարների մոտ՝ 2 տեսակի էյմերիա – *E. media* և *E. irresidua*: Գեղարքունիքի մարզի վերոնշյալ տարածաշրջանում ամենաբարձր հանդիպման հաճախականությունը ունեցել է *E. irresidua* տեսակը (աղ. 2):

Աղյուսակ 2. Գեղարքունիքի մարզում ճագարների էյմերիայի տեսակային կազմը և հանդիպման հաճախականությունը

Էյմերիայի տեսակները	Հանդիպման հաճախականությունը, %	
	ք. Ճամբարակ և հարակից գյուղեր	ք. Գավառ և հարակից գյուղեր
<i>E. perforans</i>	4.1	0.0
<i>E. magna</i>	11.4	0.0
<i>E. media</i>	20.7	24.0
<i>E. irresidua</i>	63.8	76.0

Կատարվել է Հայաստանի լեռնային և նախալեռնային գոտիների ճագարների կոկցիդիոզով վարակվածության համեմատական վերլուծություն: Վերլուծության արդյունքում պարզվել է, որ Հայաստանի լեռնային և նախալեռնային գոտիներում ճագարների մոտ գրանցվել են էյմերիայի միևնույն տեսակները՝ *E. magna*, *E. media*, *E. perforans* և *E. irresidua* [3]: Ինչպես լեռնային, այնպես էլ նախալեռնային գոտիներում ամենաբարձր հանդիպման հաճախականությունը ունեցել է *E. irresidua* տեսակը (աղ. 3):

Աղյուսակ 3. Հայաստանի լեռնային և նախալեռնային գոտիներում ճագարների էյմերիայի տեսակային կազմը և հանդիպման հաճախականությունը

Էյմերիայի տեսակը	Հանդիպման հաճախականությունը, %	
	Նախալեռնային գոտի	Լեռնային գոտի
<i>E. magna</i>	0.7	11.3
<i>E. media</i>	5.7	20.8
<i>E. perforans</i>	23.6	4.0
<i>E. irresidua</i>	70.0	63.9

Այսպիսով՝ ճագարների վարակվածությունը կոկցիդիոզով Գեղարքունիքի մարզում բարձր է եղել: Նկատվել է ինվազիայի ինտենսիվության փոփոխություն, կախված ճագարների տարիքային կազմից և սեզոնայնությունից: Հայաստանի լեռնային և նախալեռնային գոտիներում ճագարների մոտ գրանցվել են էյմերիայի միևնույն տեսակները՝ *E. magna*, *E. media*, *E. perforans* և *E. irresidua*: Ինչպես լեռնային, այնպես էլ նախալեռնային գոտիներում ամենաբարձր հանդիպման հաճախականությունն ունեցել է *E. irresidua* տեսակը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Абуладзе К.И.* Паразитология и инвазионные болезни сельскохозяйственных животных. М., “Колос”, с. 91-93, 1982.
2. *Аниканов В.С.* Кокцидии кроликов, норок и песцов клеточного разведения (систематика, биология, экология). Петрозаводск: Карельский научный центр РАН, с.35-43, 1994.
3. *Барсегян Р.Э., Петросян Р.А., Никогосян М.А.* Распространение кокцидиоза кроликов в Лорийском марзе Армении и видовой состав кокцидий. Экологическая безопасность территорий и акваторий: региональные и глобальные проблемы, Керчь с. 37-38, 2016.
4. *Нагашиян О.З., Григорян Л.Г.* Видовые особенности эймерий (*Eimeria*, *Coccidia*) в кролиководческих хозяйствах Армении. Биолог. журн. Армении, 66, 4, с. 85-86, 2014.

Ստացվել է 22.02.2017